

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ր

Երևուսողժ. 22 Դեկտեմբեր 1979

Նորին Ս. Օժուժիկն Տ. Տ. Վաղգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Եննդեան տօներու բարեբաւաստիկ առիթներով, խոնարհարար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օժուժեան մեր և Ս. Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրալին Աստուծմէ որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածինն՝ անսասանութիւն և բարգաւաճում:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երևուսողժի

Երևուսողժ, 22 Դեկտեմբեր 1979

Նորին Սրբութիւն

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ

Վատիկան

Ս. Եննդեան և Նոր Տարւոյ բարեբաւաստիկ առիթներով, յարգանք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ Եկեղեցիին՝ բարգաւաճում, թող Ամենակաբողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ձրագիրները:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երևուսողժի

Երևուսողժ, 22 Դեկտեմբեր 1979

Ն. Ամենապատուութիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկուա

Ս. Եննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և քերթ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երևուսողժի

Ն ՈՐ Մ Ա Ր Ի Ն Ա Ռ Ա Պ Ե Ն Ե Ր

Ցարեմիբրին, Դեկտ. 20, Աւագ Տօներէն առաջ, Ս. Յակոբ Մծերայ հայրապետի տունին, չորս ընծայացաներ ծանկի եկան Գլխադիր Ծակորտ առաքելի մատուակն առջև, կատարելու համար իրենց աւխաբը: Այնքա և Մարի Մատուակեան ընծայարանի առաջին դասարանի չորս աշակերտներ՝ Սիման Նայիրեան, Սերբր Տէմիրճեան, Խաչիկ Գարայեան և Նրայ Չիլինկիրեան կոչուեցան Աւագ Սարկաւազութեան աստիճանին:

Անգամ մը ևս, կետեկելով նախորդ բազմաթիւ սերունդներու օրինակին, որով պատանի հոգիներ իրենց կեանքը նուիրած են շայ Եկեղեցիի ծառայութեան, չորս Սարկաւազներ կատարեցին, Աստուծոյ և մարդոց առջև, իրենց խառնուելով ծառայելու Աստուծոյ Սեղանին: Սկստուածային և երկնաւոր շնորհը իշու անոնց քրտեղուն, կոչուելու համար զանոնք նոր գեանքի մը, կրօնաւորի կեանքին, զոր յանձն առին, զբոս վկայութեան անձանց իրքեանցո:

Ճառանգաւորաց Վարժարանն և ընծայարանի Վերատեսուչ Գերջ. Տ. Շահէ Արքեպոսոս իր Աջը անոնց գլուխին և ազօրեց որ անոնք լիցուին Ս. Ազգիով, տի սպասաւորութիւն Ս. Եկեղեցեալոյ:

ԱՌ. քեզ զմաքուր և զտուրք սուրբ ի ձեռաց Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի և լի՛ր սուրբ յանձնարան խորեւթեան մեզաց առաջի երեսաց նորա ...: Անանդապան այս բառերով, ձեռնադրիչ Արքապանք զբաւ Ուրբը իւրաքանչիւր Սարկաւազի ուսին, յանձնեց Աւետարանը, Գատարադի սպասները և բուրվատը, խնկարկութեանն առաջ, զոր երէցս կատարեց իւրաքանչիւր Սարկաւազ:

ՈՂՂոյնէն առաջ, Նորին Արքապանութիւնը տաւաւ նորընծայ Սարկաւազներուս նեանեալ յորդորը:—

«Որ կոչեցեր զոսա ի սպասաւորութիւն Ա. Եկեղեցոյ»

Սիրելի նորընծայ Սարկաւազներ, Երեք բառեր կան այս տոպիս մէջ, զոր կ'անջատեմ այսօրուան աղօթքէն, բնաբան ընկելու համար զանոնք մի քանի խօսքին, զոր կ'ուզեմ ուղղել ձեզի այսօր. կոչելով, սպասաւորութիւն և Եկեղեցի:

Կոչելով: Աղօթքին մէջ առ Աստուծո, կրրկնեցցիք այս բառը շարունակ, բնիւ համար որ ձեներ, մարդ էակներս, այս աշխարհի վրայ ոչ մէկ յաւակնտուութիւն կրնանք ունենալ Աստուծոյ ծառայութեան զարու, եթէ ինքը իջլլալ մեզի կանչուող: Թէ ձեներ ոչինչ ենք Աստուծոյ առջև, որքան ատեն որ լինք լսած իր ձայնը, որքան ատեն որ չենք զգտած մեր մէջ թէ ինքն է որ կ'ուզէ փոխել մեզ: որ կ'ուզէ սովորական մեր բնութեանն ազատել մեզ, որ կ'ուզէ յատուկ պատասխանատուութիւն մը տալ մեզի:

Թիւն մը տալ մեզի: Ան է որ կոչեց Արքաւազը անապատէն որ գայ և կապէ իր ժողովուրդը Աստուծոյ և ընէ զայն ուխտաւոր ժողովուրդ: Ան է որ Մովսէսը յարբոյց որ պատէ իր ժողովուրդը Սեփաղայեանց գերբնիկն և բերէ իր հայրերու երկիրը: Ան է որ, վերջապէս, զրկեց իր սիրելի Որդին, որ բանայ Աստուծոյ առջև նախապարէր այն հաւատքին, որ բոլորս կը կապէ ճշմարիտ Աստուծոյ: Թանուս այդ կրօնման, կը հաւատանք որ գուցէ Սիման, Սերբր, Խաչիկ և Նրայ Սարկաւազներ, այսօր ծանկի եկաք Աստուծոյ խորանին առջև, որովհետեւ լսեցիք Անոր կոչը: Եկեղեցական ծառայութիւն առանց կոչումի, ինքնախաբէութիւն մըն է, կրօնական խաբէութիւն մըն է, որուն գինը շատ ծանր կը վճարեն անոնք՝ որ առանց գիտակցութեան կը նստրուին Աստուծոյ ծառայութեան: Արժանեալ այդ կոչումով է միայն որ մենք կ'ըլլանք սպասաւորներ ձկեղեցիին:

Երկրորդ բառը սպասաւորութիւնն է: Սպաս ըլլալ, սպաս՝ Աստուծոյ տան: Գերազանց սպասը, որուն օրինակով կ'ուզեմ որ առաջնորդուիք, սիրելի նորընծայ Սարկաւազներ, Գերազանց սպասը հաղորդութեան սկիւնն է, որուն մէջ մեր հաւատքը կը յաւըղի ինչցեն Աստուծոյ Մարմինը և Նորինը: Ըլլալ սպաս Աստուծոյ, ըլլալ Սիրի մը նստրակաւն, որուն մէջ զգալի և շօշափելի կը դառնայ Աստուծոյ ներկայութիւնը: Այս է սպասաւորութիւնը: Աղօթեցէք որ գուցէ ըլլաք նման այն սկիւնին, որուն մէջ կ'իջնէ Աստուծոյ շօքին, հոգի հեղութեան, հոգի իմաստութեան, հոգի աննաւորոյ և գիտութեան, հոգի որտուածմտութեան: Աղկարչի սպաս մը ըլլալ կը նշանակէ ոչ միայն ներքնապէս փոխախլ, ոչ թէ միայն մերկանալ մեզքի սմբողջական սրբապետութեան և ազատագրել իր հոգին, այլ կը նշանակէ նոր հոգի մը ընդգրկել, որ ինքը կ'ըլլայ այնև արբաղան ներկայութիւն մը ձեր կեանքին մէջ, իսկական ներկայութիւնը ձեր կեանքի ինքնապահպան քայլին մէջ:

Եւ վերջապէս երրորդ բառը՝ զոր կ'ուզեմ ընդգծել և ձեր մտքին մէջ քանդապիլ՝ Սկեղեցիի բառն է: Եկեղեցին Աստուծոյ սուրբ քան լին, եթէ ոչ մեր ժողովուրդը: մեր հայ ժողովուրդը: Մենք այդպէս կը հասկնանք շայ Եկեղեցիին: Եւ զուր, երբ կը զգաք կոչումը պաշտօնեաները ըլլալու Աստուծոյ և որպանել Ս. Ազգիին, զուր սխալ մը կը կատարէք: Այդ սխալը ծառայելն է Եկեղեցիին, այսինքն մէկ սովորական ծառայութեան: Եւ ակալն, ոչ թէ սովոր մը նման, այլ աստուծային ծառայութեան մը: Դուք եկեղեցոյ պաշտօնեաներէ կ'է կոչուած էք ծառայելու: Եւ զարեւոյթ ոչ զարեւոյթ նախատակուեցաւ իր հաւատքին համար, ըմպեց բազմաթիւ բաժակներ մատուան և տանջանքի և սակայն չխախտեց իր հաւատքը:

տեցաւ ընտելը հաւատարի կիմերէն, Ֆնաց հաւատարիմ Աստուծոյ, Ֆնաց ամուր կապուած իր տանձային աւանդութիւններէն, Ֆնաց ժողովուրդ Աստուծոյ: Դուք, երբ պիտի ըլլաք Աստուծոյ պաշտօնեաները, պիտի ըլլաք այն մարդիկը, որոնք զատուցուած են միտնորէն և զրկուած Աստուծոյ կողմէ, այդ որովորէրդին ծառայելու համար՝ կը տեսնէք թէ՛ որքան մեծ և ծանր է ուրաքը որ կը դրուի ձեր ուսերուն, այս առաւօտ: Եւ սակայն, սիրելի Սարգիսազներ, մի՛ վախնաք: Մի՛ վախնաք, որովհետև Աստուած, որ կը կանչէ ձեզի այսօր, պիտի տայ ձեզի այժ, դիմացկունութիւն, զսեղութեան ոգի, և որքան աւելի ծառայէք, որքան աւելի տառապիք, այնքան աւելի պիտի քաղցրանայ ձեր ուսերուն վրայ դրուած մաքուր և սուրբ ուրաքը:

Եղէք Աստուծոյ մարդիկ, եղէք Եկեղեցիի զտակներ, եղէք արժանաւոր Սարգիսազներ, նման հաւային և մեծ Սարգիսազին՝ Ս. Ստեփանոսի, և զտան եղէք որ Աստուած ձեզի պիտի ըլլայ կովանաւոր և ոգնական միշտ և յաւիտեանս: Ամէն:

Կու տանք համառօտ կենսագրութիւնը նորընծաներուն:

Սիմոն Սրկ. Նայիրեան ծնած է Կէմերէկ՝ 1961ին: 1968ին ընտանեօք կը փոխադրուի Պոլիս, ուր շրջ տարիներ կը յաճախէ Կէտիկ Փաշայի ազգային վարժարանը և ապա, երկու տարիներ, Ճերթեօյի ազգային երկրորդ վարժարանը: 1974 Սեպտեմբերին կը դիմէ և կ'ընդունուի Ս. Աթոռոյ ժառանգ. վարժարանը, որուն ընթացքին կը հետևի տարի մը Ս. Թարգմանչաց վարժարան յաճախելէ ետք:

Անցեղ տարի յաջողութեամբ աւարտեց ընթացքը ժառանգ. վարժարանին:

Սեռոյ Սրկ. Տէմրճեան ծնած է Սասուն՝ 1961 տարուան առաջին օրը: 1969ին ընտանեօք փոխադրուած է Տիգրանակերտ և 1973ին

հաստատուած Պոլիս: Լոն կը յաճախէ Ներսէսեան վարժարանը, որուն կիսգերբորդ դասարանը աւարտելէ ետք կը դիմէ և կ'ընդունուի Ս. Աթոռոյ ժառանգաւորաց վարժարանը:

1974-75 տարեշրջանին աշակերտեցաւ տեղւոյ Ս. Թարգմանչաց վարժարանին, և ապա մտնելով ժառ. վարժարան, անցեալ տարի յաջողութեամբ աւարտեց անոր ընթացքը:

Խայիկ Սրկ. Պարտիան ծնած է Գասթեմաւնիցի ծնողքէ՝ 1960ին և մասնկութեան ընտանեօք փոխադրուած Պոլիս:

Աւարտելէ ետք տեղւոյ Լուսաւորեան վարժարանը, 1976 Ապրիլին եկած է Երուսաղէմ՝ զոհացած տալու իր և ծնողաց խորունկ հրօնասիրութեան: Պոլիս գտնուած միջոցին զպրութիւն ըրած է Ս. Յարութիւն եկեղեցիին մէջ:

Անցեալ տարեշրջանին աւարտած է ընթացքը ժառանգաւորաց վարժարանին:

Հրայ Սրկ. Չիլիկիրեան ծնած է Չէյրօթ՝ 1962ին: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ և աւարտած վահան թէքեան վարժարանի կնքածեայ շրջանը զաւսիչաւորութեամբ: Լիբանանի քաղաքացիական պատերազմի բերումով կարճ շրջան մը առանց ուսումի մնալէ ետք, 1976 Սեպտեմբերին եկած է Երուսաղէմ և աշակերտած Ս. Աթոռոյ ժառանգ. վարժարանին, որուն ընթացքը յաջողութեամբ աւարտած է Յունիս 1979ին:

Չարն ալ Ուրար կրելու արտօնութիւն ստացած են 1978ի Օգոստոս 19ին, Լուսարաւայան Գերշ. Տ. Հայրիկ Արքեպօ.ի ձեռամբ:

Սիոն, յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ս. Յակոբեանց Ուխտին, որտեղին կը շնորհաւորէ նորընծաները, մաղթելով որ Ընծայարանի ընթացքը Կաւարտելէ ետք արժանի ըլլան քահանայութեան սուրբ աստիճանին:

ՇԱԿԱՔՕՐԸՆԱՅ ԵՐԵՎԱՆԻՑԻՔ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Նոյեմբերի 10ին, ժառանգաւորաց վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Տիար Փայլակ Անթապեանը սաներուն մատչելի եղանակով շահեկան դասախօսութիւն մը տուաւ, նիւթ ունենալով Տիեզերագիտութիւնը Միջնադարեան Հայաստանի մէջ:

Նոյեմբերի 24ին, յարգելի Տեսուչը շարունակելով իր նիւթը, վարժարանի սաներուն ծանօթացուց Հայաստանի գիտականներուն նորագոյն նուազումներուն՝ աստղագիտու-

թեան այնքան բարդ բայց զարմանաբար ընադրաւորին մէջ:

Մաները մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին նիւթի շուրջ և բազմաթիւ հարցումներով նոր լուսաբանութիւններ խնդրեցին և հանգամանորէն պատասխան ստացան:

Միւս Շարաթ իրիկուններուն տեղի ունեցան վարժանկարի դիտումներ՝ սաներուն մտահորիզներ ընդլայնելու և նկարագրի կերտմանը նպաստելու համար:

Ե Կ Ե Ղ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ո Վ Կ Ա Ն Ք

● Եբ. 3 Նոյմ. — Ս. Զորից Անեաբանչացն: Ս. Գատարազը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արդ. Գալաչեան:

● Կիր. 4 Նոյմ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Համարձում Արդ. Քէշիշեան:

● Բշ. 5 Նոյմ. — Ս. Յովսէփայ Ասուածամորն: Ս. Գատարազը մատուցուեցաւ Գեթեմանիս Ս. Ասուածամանայ տանարին մէջ, Հայր Յովսէփ գերեզմանին վրայ: Գատարազն էր, ըստ սովորութեան, Տանարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Արդ. Գալաչեան:

● Եր. 10 Նոյմ. — Ս. Երկուսաց վարդապետացն: Ս. Գատարազը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ, Ժամաբարն էր Հոգշ. Տ. Սևակն Վրդ. Ղարբիպեան:

— Կէտիկ ետք: Ամեն. Ս. Գատրիարք շոր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարաւիտաւով մուտք գործեց Ս. Յարութեան Տանարին Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնայն կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան երկնայեան ժամերգութիւնն ու Նախատանալը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեցաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տանարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Գալեան:

● Կիր. 11 Նոյմ. — Գիւտ Խաչ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուր և մատուցուեցաւ Ս. Գատարազ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Գալեան: Ապա, Ամեն. Ս. Գատրիարք շոր գլխաւորութեամբ, կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս Թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Գատարանեղեցոյն շարք, սկսելով Գիւտ Խաչի այրէն և աւարտելով անդ: Նորին Ամենապատուութիւնը ամպնովանի տակ և Կենսաբայտի մատուցելի ձեռնին, կ'օրհնէր Տանարը լեցնող հաստացեալներու բազմութիւնը:

● Եբ. 17 Նոյմ. — Տօն Անկնայն Սրբոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան:

● Կիր. 18 Նոյմ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ապք Սեղանի վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Մեարոպ Արդ. Մուլթափեան: Հոգշ. Հայրը քարոզեց, խօսելով քրիստոնէական կրօնի բարոյական սկզբունքներու մասին:

● Ուր. 23 Նոյմ. — Նախատանալը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, Նախադանութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեանի:

● Եբ. 24 Նոյմ. — Տօն Ս. Հրեշտակապետաց Գարիկի և Միխայիլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Անուշահան Վրդ. Ջրջանեան Ս. Գատարազէն ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան Նախագահեց Ս. Աթոռոց բարեբարունի Այաւանի ձէվակիրճեանի և պարագայից հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին, որմէ ետք Միաբան Հայրեր պատուասիրուեցան Վանուց Տեսուչանը՝ Տեսուչ Հոգշ. Տ. Սևակն Վրդ. Ղարբիպեան:

● Կիր. 25 Նոյմ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամաբարն էր, ըստ սովորութեան, Վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևակն Վրդ. Ղարբիպեան:

● Եր. 1 Դեկտ. — Առաւ. Անդրի և Փիլիպպոսի: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 2 Դեկտ. — Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնասան մեր Տանարն մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Գալեան:

● Բշ. 3 Դեկտ. — Նախատանալին ի Ս. Յակոբ Նախապահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպս:

● Գշ. 4 Դեկտ. — Ընծաւումն Ս. Ասուածամորն: Առաւօտեան, Գերշ. Տ. Տանէ Արքեպսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեալով մեկնեցան Գեթեմանի ձորք ու Էղբաւիտաւով մուտք գործեցին Ս. Ասուածամանայ Տանար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ տուան հանդիսաւոր Ս. Գատարազը մատուց Գերշ. Հանգիթապետ Սրբազանը: Ս. Գատարազէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտուն Ս. Աթոռոց և Աղգին բարերար Կելլապի Կելլապէհեանի և համայն Կելլապէհեանց գերդաստանի շնչեցեղաց հոգիներուն համար:

● Եր. 8 Դեկտ. — Ս. Կիկոպոսի և Գրիգորի Սխնչկազորեացն: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արդ. Գալաչեան: Վերաբերուած կատարուեցաւ Մայր Տանարի ներքին գաւիթը՝ Ս. Կիկոպոսի ոտնաշինի վրայէն:

● Կիր. 9 Դեկտ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Համարձում Արդ. Քէշիշեան:

● Ուր. 14 Դեկտ. — Նախատանալին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Այաւանեան:

● Եր. 15 Դեկտ. — Ս. առաւիցի և առաջին լուսնորացն մերոց Թաղեփի և Բարբոյիճեփի: Ս. պատարազը մատուցուեցաւ Մայր Տանարի Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Սևակն Վրդ. Ղարբիպեան:

● Կիր. 16 Դեկտ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնա-

ժատրան մէջ: Ժամաբարն էր Հոգը. Տ. Մեքսրոզ Աբղ. Մաւթաֆեանց, Հոգը. Հայրը քարոզեց, բնարան ունենալով որքան ծառն Աւետարանէն ՎՄայր իմ և եղբարք իմ սոքա են ... 3, յայտնելով որ քրիստոսնեան բուրբ մարգերը պէտք է նկատել իբրև իր մայրը, եղբայրը կամ քոյրը, և ըստ այնմ վերաբերել անոնց հետ: Յորդորեց ներկաները որ այդ ոգիով լցուին Յիսնակի այս շրջանին և այդպէս դիմաւորեն Մանկացեալ Փրկչիը:

● Գշ. 19 Դեկտ. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

● Եշ. 20 Դեկտ. — Տօն Ս. Լաւրց եղիպացոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ ժատրան մէջ: Ժամաբարն էր, ըստ սովորութեան, Խատուղանակարը Հոգը. Տ. Մալոսց Վրդ. Բարիլուսեան:

● Ուր. 21 Դեկտ. — Ս. Կոստի Յղուսեան հանդիսաւոր Նախատեսակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրակի Սպո. Գարիկեան:

● Եր. 22 Դեկտ. — Յղուսեան Ս. Աստուածամոր: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիրակի Սպո. Գարիկեանի գլխաւարութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեալով մեկնեցան Գեթեմանիի ձորն ու շերտափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Գատարազը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Կիր. 23 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ վանոց: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամաբարն էր Հոգը. Տ. Ոսկի Աբղ. Որդերեանը Հոգը. Հայրը խօսեցաւ իր առաջին քարոզը, նրա՛նք ունենալով սիրոյ առաքելութիւնը:

● Ուր. 28 Դեկտ. — Նախատեսակին ի Ս. Յակոբ Նախագահեց Գերշ. Տ. Եանէ Արքեպս. Անէմեան, որ ապա կիսատարակազութեան ազատեան շնորհեց ընծայարանի սուսնող 4 Ուրապիկներուն:

● Եր. 29 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծրնայ հայրացեօն: Ս. Գատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխազրի ժատրան մէջ: Ժամաբարն էր Հոգը. Տ. Վահիկ Աբղ. Մանկաբարեան: Վերաբերումը կատարուեցաւ փոքր տանեան մէջ սուրբին նկարով շինուած Սեղանին վրայ: Գերշ. Տ. Եանէ Արքեպս. կատարեց Սարկաւազակն ձեռնադրութիւնը Ուրարակիրներ Սիմոն Նայրիեանի, Սերոբ Տէմիրեանի, Իսահիկ Գաբայեանի և Հրաչ Զիլիսկիրեանի և խօսեցաւ յորդորական քարոզ մը:

— Երեկոյեան ժամերգութեան աւարտին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., Մայր Տաճարին մէջ վարդապետական գաւազանի իշխանութիւն տուաւ Ս. Ուստիս երկուստարգ Միաբաններէն Հոգը. Տ. Ասպետ Աբղ. Գալեանի և Հոգը. Տ. Մանուէլ Աբղ. Երկուսեանի:

● Կիր. 30 Դեկտ. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յատարիւն, վերնատան մեր ժատրան մէջ: Ժամաբարն էր Հոգը. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 4 Նոյմ. — Լուսեղականներու Նոր Փրօփոք Եօրհէն Աւելբմանի պաշտօնի ստանձնումի առթիւ իրենց եկեղեցոյ մէջ կատարուած հանդիսութեան ներկայ գտնուեցան Գիւլանապետ Գերշ. Տ. Եանէ Արքեպս. և Աւագ Թարգման Հոգը. Տ. Ասպետ Արքեպս.:

● Գշ. 6 Նոյմ. — Ս. Արթուր ժամանեց Կրետի Հայոց Հովիւ Արթ. Տ. Յովսէփ Քյոյ. Հալուսեան և վերադարձաւ Ուր. 30 Նոյեմբերին:

● Եշ. 15 Նոյմ. — Կէսօրէ առաջ, Գեղնիս քայի արքայական գերբաւարանի տարեգործի առթիւ, Յրանչիսկեաններու Մայր Եկեղեցոյ մէջ կատարուած պաշտամունքին ներկայ եղաւ Հոգը. Տ. Անուշաւան Վրդ. Ձղիւսեան: — Երեկոյեան, Նոյն առիթով, American Colony մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կանէ Արքեպս. և Հոգը. Տ. Ասպետ Արքեպս.:

● Կիր. 16 Դեկտ. — Սկոզիական Եկեղեցոյ մէջ, Երէց Վեր. Թով Լուսեանի մեկնումի առիթով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրակի Սպո. Գարիկեան, Հոգը. Տ. Ասպետ Աբղ. և Տիրա Գ. Հինչլեան:

● Գշ. 18 Դեկտ. — Երուսաղէմի Գաղաքապետ Վոսմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Հրեական Իսնուկայի (Մակարեանց) և Գրիստուէական մօտաւարտ Ս. Մնչկեան տաներուն առիթով սարժուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Եանէ Արքեպս. և Հոգը. Տ. Ասպետ Արքեպս.:

● Դշ. 26 Դեկտ. — Երուսաղէմի Ս. Երեմիական տանին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Գատարազը Հայրը, ի գլուխ Միաբանաբեան, շնորհաւորական այցելութեան տուաւ Յրանչիսկեանց Գերշ. Կրետիսի և Լատինաց Ամեն. Ս. Գատարաբջին Աւագ, Գերշ. Տ. Եանէ Սրբազանի ընկերակցութեամբ, Նոյն առիթով այցելեց Գաղական Նուխարի և Անկիրքեան Արքեպս. ինչ Գերշ. Տ. Կիրակի Սպո. Գաղապետ, Հոգը. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթոլիկ և Բողոքական փոքր յարանուանութեան Ազգևոր պետերուն:

● Ուր. 28 Դեկտ. — Մօտաւարտ Նոր Տարւոյ առթիւ, Իսթալէլի Նախագահ Իցնաք Նալբանի կողմէ, Նախագահական Ապարանքին մէջ, Քրիստոսեան համայնքներու հոգևոր պետերուն ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Գատարազը Հայրը, հետն ունենալով Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ և Տ. Եանէ և Տ. Կիրակի Սրբազանները:

Ս Ի Ո Ն

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ 1979 ՏԱՐԻՈՑ

Բ Ա Ն Ս. Ս Ի Ր Ա. Կ Ա Ն. —

Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ. — Սեփանոս
 Կրդ. Ազրամաբայ 22
 Ղուկաս Վրդ. Խարբերդյի 67
 Յովհաննէս Քհն. Մանկասարենց 108
 Խաչատուր Արք. Կեստրացի 172
 Կամուկ Թադի Գագրասուհր 215
 Հայկական ծածկագրեր 261

MICHAEL E. STONE. — Two leaves
 of Acts in the Perkins Library 24

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ. — «Պոստուրբիս
 Բարադանու եւ Յովասափու» 25
 «Պոստուրբիս եւ Խոստ Խիկարայ .
 Իմաստոյ» 110
 Վարդան Արեւելցու «Հաւաճումն
 Պոստուրբան» կորած աղբիւրներ 265

Բ Ա Ն Ս. Ս Տ Ե Ղ Ծ Ա. Կ Ա Ն. —

ԵՂԻՎԱՐԳ. — Երբ կը նայիմ 14
 Մեծ պահեր 59
 Մարգարեաներ 104
 Վերջալոյս 104
 Երեւան 169
 Գեղարգ 211

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Քառեակներ 17, 61,
 105, 212, 259

Autumn garden (Սիլվա Կապու-
 օրկեանի՝ քղմ.) 212
 * * (Մարո Մարգարեանի՝ քղմ.) 259

Գ. ՃԱՐՏԱՐ. — Վարդանոց յիշատակիք 18
 Քառեակներ 18
 Խնդրանքներ 62
 Բանտարկեալի մը նման... 62

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1979 տարւոյ ընթացիկն Ս. Յակոբ-
 Ե ա'ց Մ ա յ ր Տ ս ս ա ռ ի ն եւ յալ Մ ր ս վ ա յ ր Ե ռ ու ն եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. — Վանքարոյնակ, Ս. Յակոբայ կա-
 րուհի, Տիկին Սաթենիկ Թէրզիպաշեան
 կը նուիրէ կենաց Փայտի երկու մասաքս-
 եայ բռնիչներ:
2. — Թեհրանարնակ Շահէ Մուրա-
 եան կը նուիրէ երկու միջակ եւ մէկ փոքր
 ասեղնազարծ ճերմակ քարփուրաններ:
3. — Պէյրութարնակ Տիկին Մարի
 Ռիսիւեան կը նուիրէ կարմիր յատակով
 արծաթաթել ըսնուած խաչով ծածկոց մը
 Ս. Գլխադրին:
4. — Լոս Անճելոսարնակ Տէր եւ Տի-
 կին Ոսկան եւ էլիզ Ստամպոլեաններ կը
 նուիրեն Ս. Յակոբանց Մայր Տաճարի
 խորաններուն, Ս. Յարութեան Քրիստոսի
 Գերեզմանին, Ս. Աստուածածնայ Գերեզ-
 մանին եւ Ս. Հրեշտակապետաց Աւագ Խո-

- րանին եւ Բանտին՝ սպիտակ յատակով
 կտուր վրայ գործուած խաչերով եւ վար-
 դերով պարզարուն եւ ասեղնազարծ ծոպե-
 րով սեղաններու հետեւեալ ծածկոցները. —
- 4 հատ Մայր Տաճարին՝ Աւագ Խոր-
 նին, Ս. Գլխադրին, Ս. Աստուածածնայ
 եւ Ս. կարապետի խորաններուն:
 - 1 հատ Ս. Յարութեան Քրիստոսի Ս.
 Գերեզմանին:
 - 6 հատ Ս. Աստուածածնայ Տաճարին՝
 չորս ծոպկամաններով միասեղ:
 - 2 հատ Ս. Հրեշտակապետաց՝ Աւագ
 Խորանին եւ Քրիստոսի Ս. Բանտին:
- Սեղանի այս ծածկոցները յանձնուե-
 ցան պատկան տեւալութեանց, վասն գոր-
 ծածութեան ըստ նուիրատուներու փա-
 փաքին:

ՀԱՅՐԻԿ ԱՐԲԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ
 Լուսարտապետ Ս. Արոտոյ